ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Լիլիթ Պողոսյան, ՀՀ ԿԳՄՍՆ մշակութային ժառանգության վարչության մշակութային ժառանգության պահպանության և զարգացման բաժնի պետ

**2. Գործուղման վայրը և ժամկետները**

Լյուքսեմբուրգի Դքսություն, ք. Լյուքսեմբուրգ, մայիսի 4-7, 2026թ.

**3. Հրավիրող կողմը**

Եվրոպայի Խորհրդի «Մշակութային ուղիների» եվրոպական ինստիտուտ

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Եվրոպայի Խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի 2026 թ. հանդիպմանը մասնակցություն

**5. Քննարկված թեմաները**

- ✓ Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիների 2025-2026 թթ. շրջափուլի նոր հայտերի հավաստագրում, ընթացիկ ուղիների վերահավաստագրում
- ✓ 2026 թվականի գործողությունների ծրագրի ներկայացում և հաստատում
- ✓ Երկրների քարտեզագրման փաստաթղթերի ընդունում (Խորվաթիա, Լիտվա)
- ✓ 14-րդ խորհրդատվական ֆորումի եզրակացություններն ու արձագանքները (Կապադովկիա, Թուրքիա)
- ✓ Ընդլայնված մասնակի համաձայնագրի 15-րդ տարեկան ոչ ֆորմալ խորհրդակցական համաժողովի ընթացիկ աշխատանքների քննարկում (Երևան, Հայաստան)

- ✓ Համագործակցության հուշագրի ստորագրում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Եվրոպայի խորհրդի «Մշակութային ուղիներ» ընդլայնված մասնակի համաձայնագրի քարտուղարության հետ
- ✓ Երիտասարդական հարցերի վերաբերյալ աշխատանքային խմբի զեկույց
- ✓ Մշակութային երթուղիների ծրագրի 40-ամյակ. կարծիքների փոխանակում
- ✓ Բյուրոյի մեկ անդամի ընտրություն (2026–2028)
- ✓ Կառավարման խորհրդի հաջորդ նիստի ամսաթվի որոշում
- ✓ Համառոտ զեկույցի (որոշումների ցանկ) ընդունում

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

2026 թ. մայիսի 5-7-ը տեղի ունեցավ Եվրոպայի Խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի տարեկան նիստը, որի շրջանակում հաստատման էին ներկայացվել մի շարք նոր «Մշակութային ուղիների» հավաստագրման և «Մշակութային ուղիների» ընթացիկ հավաստագրման հայտեր:

Մայիսի 6-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը հանդես է եկել ելույթով՝ Եվրոպայի Խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդին հայտնելով, որ ԵԽ Մշակութային ուղիների ընդլայնված մասնակի համաձայնագրի խորհրդատվական 15-րդ ֆորումը և Կառավարման խորհրդի ոչ պաշտոնական նիստը 2026 թ. սեպտեմբերի 22-25-ը անցկացվելու են Հայաստանի Հանրապետությունում: Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև 15-րդ տարեկան խորհրդակցական համաժողովի թեմատիկ և կազմակերպչական շրջանակը:

Միևնույն ժամանակ մայիսի 6-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը և Եվրոպայի խորհրդի «Մշակութային ուղիներ» ընդլայնված մասնակի համաձայնագրի (EPA) կառավարող խորհրդի գործադիր քարտուղար Ռուի Գոմեշը ստորագրել են Համագործակցության հուշագիր Եվրոպայի խորհրդի «Մշակութային ուղիներ» ընդլայնված մասնակի համաձայնագրի քարտուղարության և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև:

Աշխատանքային ոչ պաշտոնական քննարկումներ եմ ունեցել անդամ պետությունների, ինչպես նաև մշակութային ուղիների ներկայացուցիչների հետ՝ Հայաստանում Մշակութային ուղիները զարգացնելու և արդյունավետության բարձրացման նպատակով:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Կառավարման խորհուրդը միաձայն հաստատեց ԵԽ մշակութային ուղիների 16-րդ տարեկան խորհրդակցական համաժողովը Իսպանիայում կազմակերպելու Իսպանիայի Թագավորության առաջարկը: Որոշվեց Ընդլայնված մասնակի համաձայնագրի վարչության նիստը կազմակերպել 2027 թ. փետրվարին, իսկ կառավարման խորհրդի նիստը՝ 2027 թ. մայիսի 6-8-ը Լյուքսեմբուրգում: Կառավարման խորհրդի անդամ երկրների ներկայացուցիչների հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել ծրագրի շրջանակում փորձի փոխանակման ընդլայնման և համագործակցության հեռանկարների վերաբերյալ:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիներ ծրագրի շրջանակում Հայաստանի ներգրավվածության ընդլայնում,

Ընդլայնված մասնակի համաձայնագրի 2026թ. սեպտեմբերի 22-25-ը տարեկան խորհրդակցական ոչ ֆորմալ համաժողովի Հայաստանի Հանրապետությունում կազմակերպման ապահովում:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

Լիլիթ Պողոսյան

11 մայիսի 2026 թ.